

5.7. Ստանդարտացում, չափազիտություն, սերտիֆիկացում

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափաբանության և սերտիֆիկացման վարչության կողմից տրամադրված վիճակագրական ամփոփ տվյալների, 2000թ. 1-ին կիսամյակում ստանդարտացման, սերտիֆիկացման, հավատարմագրման և նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջների պահպանման պետական վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեությունը բնութագրվել է հետևյալ ցուցանիշներով.

1. Ընդունվել և պետական գրանցում են ստացել Հայաստանի 90 ստանդարտներ (1999թ.1-ին կիսամյակում՝ 12): ՀՀ տարածքում գործադրվել է 60 միջպետական ստանդարտներ (1999թ.1-ին կիսամյակում՝ 209) և 4 միջազգային ստանդարտներ: Գրանցվել են արտադրանքի վերաբերյալ ՀՀ տեխնիկական 253 պայմաններ (1999թ.1-ին կիսամյակում՝ 251): Հրատարակվել են 9 անուն տեղեկատվական նյութեր՝ ստանդարտների կատալոգ, տեղեկատու, տեղեկատվական թերթիկներ (1999թ.1-ին կիսամյակում՝ 7):

Տրվել է համապատասխանության 4422 սերտիֆիկատ (1999թ.1-ին կիսամյակում՝ 5151), այդ թվում՝ ներմուծվող արտադրանքների համար 3950 (4334), արտահանվող արտադրանքի համար 265 սերտիֆիկատ (750): Մնացած 207-ը տրվել է Հայաստանում սերիական արտադրվող արտադրանքի համար (1999թ.1-ին կիսամյակում՝ 67): Մերժվել է արտադրանքի սերտիֆիկացման 54 հայտ (1999թ.1-ին կիսամյակում՝ 73), որից՝ 67-ը արտադրանքի անհամապատասխանության պատճառով (1999թ.1-ին կիսամյակում՝ 44): Հարկ է նշել, որ մեկ հայտի մեջ կարող են մտնել մի քանի արտադրանքի մի քանի տեսականի:

2. ՀՀ տարածքում հավատարմագրվել է 4 լաբորատորիա (1999թ.1-ին կիսամյակում՝ 17):

Ըստ տեղեկատվության նույն աղբյուրի, 2000թ. 1-ին կիսամյակում անորակության պատճառով չեն սերտիֆիկացվել ներմուծվող արտադրանքի մի շարք տեսակներ.

Անորակության պատճառով չսերտիֆիկացված արտադրանքի ցուցակը

Երկիրը, արտադրող ձեռնարկությունը	Արտադրանքի անվանումը	Արտադրանքի մոդելը, տիպը	Քանակը
Բելգիա, Յանսեն Ֆարմացեվտիկա	Մոտիլիում	1մգ/1մլ 200 մլ դեղակահյութ N 1 սրվակ	60 տուփ
Ռուսաստան, Վերոֆարմ-Բելգորոդ	Պիրացետամ	Ներարկման լուծույթ 20% 2մլ N 10 ամպուլներ	1000 տուփ
Բուլղարիա, Վրամեդ	Ինդոնետացին Վրամեդ	Քսուրք 40 գ	6076 տուփ
Չեխիա, Գալենա	Սանորին Անալերգին	Կաթիլներ 10 մլ սրվակ	480 տուփ
—	Իմոդիում	Դեղահատեր	6 տուփ
—	Դուրատուս	Լուծույթ 473 մլ սրվակ	6 տուփ
—	Ֆե - 50	Դեղահատեր	6 տուփ
—	Կորտիկային	0.5% քսուրք	6 տուփ
—	ՎԻ - Ջակ	Դեղապատիճներ No. 60	12 տուփ
—	Միլանտա	Դեղակահյութ 300 մլ	8 տուփ
—	Հիդրոկորտիզոն	0.2% քսուրք	36 տուփ
—	Տայլենոլ մանկական	Դեղահատեր No. 30	12 տուփ
—	Հիտոն	1% քսուրք	36 տուփ
—	Տայլենոլ	Դեղահատեր No. 250	6 տուփ
Հայաստան, «ՄԱՊ» ԲԲԸ	Մարինադ ասորտի, վարունգ մարինացված	Ա/տ 1/1700, 1/1000 գ	Սերիական արտադրություն
Ավստրիա, «Semperit»	Դողեր օդաճնշական	215R14	16 հատ
Սլովակիայի հանրապետություն	Մսամթերք	Հավի միս, տավարի միս, երշիկեղեն	30 կգ 20 կգ 80 կգ

Երկիրը, արտադրող ձեռնարկությունը	Արտադրանքի անվանումը	Արտադրանքի մոդելը, տիպը	Քանակը
Ճապոնիա, «Dunlop» «Yokohoma»	Չնամաշ դոդեր	Մարդատար և բեռնատար ա/մ համար	200 հատ
ԻԻՅ, «Javad Jafari Trading», Հայաստան, «Բիո-Քիմ» ՍՊԸ	Դիզելային վառելանյութ Մազերի գունաթափման միջոց	- «Nika»	24480 կգ 1000 հատ